ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1955 Общественные науки

Ս. Ալիխանյան

Վ. ՏԵՐՅԱՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան շրջադարձային կետ հանդիսացավ մարդկության պատմության մեջ։ Նա ճեղքեց իմպերիալիզմի շղթան կապիտալիստական ամենախոշոր երկրներից մեկում՝ Ռուսաստանում, իշխանությունը հանձնեց պրոլետարիատին և պատմական կարճ ժամանակաշրջանում վիթխարի վերափոխումներ կատարեց ժողովրդի կյանքի բոլոր բնագավառներում։ Հոկտեմբերյան ռևոլյուցիան փշրեց ազգային ճնշման շղթաները, ոչնչացրեց ազգային ճնշման տնտեսական ու քաղաքական հիմքը։

Տերյանը Հոկտեմբերյան մեծ մարտերի մասնակից էր։ Ավրորայի համազարկերի բոցերում նա տեսավ իր երկրի փրկության և ազատագրության լույսը։ Բարիկադային մարտերի, գնդակների տարափի տակ շտապեց Սմոլնի, Լենինի մոտ և պրոլետարական ռևոլյուցիայի մեծ ստրատեգին զեկուցեց հայ ժողովրդի ողբերգական վիճակի ու իղձերի մասին։

Վ. Տերյանը որպես Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի առաջին աշխատակիցներից մեկը, որպես Հայկական գործերի կոմիսարի տեղակալ, խոշոր աշխատանք է կատարել։ Նա իր ամբողջ գիտական միտքը, ստեղծագործական տաղանդը նվիրաբերեց Հոկտեմբերյան ռևոլյուցիայի մեծ գաղափարները հայ աշխատավորության մեջ պրոպագանդելու գործին։

Մենք այս հոդվածում կանգ ենք առնելու Տերյանի մի քանի աշխատությունների վրա, որոնցում նա հայ աշխատավորության մեջ պրոպագանդում է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և նրա մեծ ստրատեգ Լենինի վեհ գաղափարները։

* * *

Վ. Տերյանը 1917 թ. նոյեմբերին Լենինի և Ստալինի հանձնարարությամբ գրեց «Զեկուցագիր Թուրքահայաստանի մասին», 1918 թ. առաջին կեսին՝ Հայկական գործերի կոմիսարիատի՝ «Նամակ հայ գյուղացիներին և բանվորներին» կոչը, 1919 թ. սկզբին՝ «Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին» բրոշյուրը։ Այդ աշխատություններում նա հայ ընթերցողներին հստակորեն բացատրում է Ռուսաստանում կատարված պրոլետարական ռևոլյուցիայի նշանակությունը, նրա դերը Ռուսաստանի ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի ազատագրման գործում։

«Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին» աշխատությունը գրելիս,

Տերյանը հանդես է բերել ոչ միայն քաղաքական կյանքի կենճոռոտ հարցերի խորը իմացություն, բոլշևիկների պարտիայի ագրարային քաղաքականության պարզ ու հստակ ըմբռնում, այլև հայ գյուղացու համար մատչելի, հասկանալի բառերով շարադրելու հիանալի կարողություն։

Բրոշյուրի առաջին մասում հեղինակը հայ գյուղացիներին ծանոթացնում է Ռուսաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիների արմատական շահերի արտահայտիչ և պաշտպան՝ Կոմունիստական պարտիայի և նրա հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինի հետ։

«Լենինի անունը անշուշտ լսած կաս, ընթերցող,—գրում է նա, — և դա զարմանալի չէ,—այժմ Ռուսաստանում դժվար է գտնել այն աշխարհքից բեխարարին, որ Լենինի մասին լսած չլինի»[1]։

Այսպես սկսելով իր զրույցը հայ գյուղացիների հետ՝ պրոլետարական ռևոլյուցիայի մեծ առաջնորդ Լենինի մասին նա միաժամանակ նախազգուշացնում է հայ գյուղացիներին այն ստի, կեղծիքի և զրպարտության առթիվ, որ տարածում են Լենինի մասին «հասարակ ժողովրդի, գյուղացիների և բանվորների ոխերիմ թշնամիները՝ վոզատերերը ու հոզատերերը»։

Տերյանը բոլորի համար հասկանալի լեզվով բացատրում է, թե ովքեր են բոլշևիկները, ով է Լենինը և ինչ են ուզում ու ասում բոլշևիկները և նրանց մեծ առաջնորդ Լենինը։

«Բոլշևիկների» կուսակցության իսկական անունն է՝ «Ռուսաստանի Կոմունիստական կուսակցություն (բոլշևիկների, այսինքն մեծամասնության)։ Դա բանվորական կուսակցություն է, այսինքն՝ այդ կուսակցությունը բանվորների օգուտն է պաշտպանում։

Եթե դու վերցնես այդ կուսակցության ծրագիրը, կամ այդ կուսակցության հրատարակած գաղեթը կամ գիրքը, բոլորի վրա կգտնես հետևյալ խոսքերը՝ «Պրոլետարներ (այսինքն չունևորներ, բանվորներ) բոլոր երկրների, միացեք»։ Եվ իրավ, որ այդ կուսակցությունը բոլոր բանվորների, բոլոր չունևորների կուսակցությունն է, այսինքն՝ բանվորների, հողազուրկ ու հող քիչ ունեցող կամ մշակություն անող գյուղացիների կուսակցությունն է»[2]։

Այս գրքում նախ ցույց է տրված, որ Կոմունիստական պարտիան բանվոր դասակարգի և գյուղի կիսապրոլետարական խավի՝ բատրակների ու չքավոր գյուղացիների պարտիան է, նրա առաջավոր և գիտակից ջոկատը, աշխատավորների ազատագրության համար մղվող պայքարի կազմակերպիչն ու առաջնորդը։ Նշված է պարտիայի ինտերնացիոնալ բնույթը, ընդգծված է, որ պարտիան իր շարքերում միավորում է Ռուսաստանի բոլոր ազգությունների ռևոլյուցիոն բանվորներին և աշխատավոր գյուղացիներին։

Ահա, — մատնանշում է Տերյանը, — այդ չունևոր բանվորների և չունևոր գյուղացիների պարտիան է, նրանց միությունն է բոլշևիկների Կոմունիստական պարտիան, որի ամենաազնիվ ու ամենազլխավոր առաջնորդն է Լենինը, դրա համար էլ շատերը բոլշևիկներին լենինյաններ էին անվանում։

---

[1] Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, 1925, էջ 298։
[2] Նույն տեղում, էջ 299։

Տերյանը, ինչպես այս, այնպես էլ մյուս աշխատություններում Լենինի մասին խոսում է հիացմունքով և ջերմ սիրով։ Լենինի նկատմամբ իր հիացմունքը նա հաղորդում է հայ աշխատավորությանը և ցույց տալիս, որ Լենինը ոչ միայն ռուս բանվորների ու գյուղացիների, այլև աշխարհի բոլոր ճնշվածների ու կեղեքվածների մեծ բարեկամը և հանճարեղ առաջնորդն է։

Նա անձամբ մի քանի հանդիպումներ է ունեցել Լենինի հետ և հիացած էր Լենինի հմայքով։

«Լենինը շատ պայծառ է և զարմանալի». այսպես է նա արտահայտել Լենինի մասին իր անհուն սերը և հիացմունքը։

Տերյանը խոսում է նաև մյուս երկրների կոմունիստական պարտիաների մասին։

«Եվ բոլոր երկրներում բանվորներն ու չունևորները միանում են, մտնում են այդ կուսակցության մեջ և հետո այդ կուսակցության զանազան երկրներում գտնվող ճյուղերը միանում են ու կազմում մի հսկայական միություն, որի անունն է Ինտերնացիոնալ, այսինքն՝ բոլոր բանվորների և չքավոր գյուղացիների, չունևորների կամ ուրիշ խոսքով պրոլետարների միջազգային միություն»[1]։

Այս բրոշյուրը, ինչպես նշվեց վերևում, Տերյանը գրել է 1919 թվականի գարնանը, երբ կոմունիստական 3-րդ ինտերնացիոնալը արդեն հիմնադրված էր։ Այդ պատճառով նա ցանկանում է, որ հայ աշխատավորությունը իմանա նաև կոմունիստական 3-րդ ինտերնացիոնալի մասին։

Ընդգծելով պրոլետարիատի դասակարգային և ռևոլյուցիոն պայքարի ու շարժումների միջազգային բնույթը, Տերյանը ցույց է տալիս, որ բանվորների և գյուղացիների շահագործումը տեղի ունի բոլոր երկրներում, աշխարհի բոլոր մասերում, որ «աշխարհի բարիքները վայելողները», բոլոր երկրների «հողատերերը և փողատերերն են», ֆաբրիկատերերը և գործարանատերերը։

Տերյանը ցույց է տալիս, որ Լենինի հիմնադրած և կոփած Կոմունիստական պարտիան, որն ունի ավելի քան քսան տարվա հերոսական պատմություն, պայքար է մղում ընդդեմ այդ «հողատերերի», «փողատերերի» տիրապետության, հանուն աշխատավորության ազատագրման։

Անցնելով Կոմունիստական պարտիայի նպատակների բացատրմանը, Տերյանը մատնանշում է, որ բանվորների ու չքավոր գյուղացիների պարտիայի անդամները կոմունիստ են, այսինքն՝ նրանք ցանկանում են «աշխատանքի գործիքները — մեքենաները, ֆաբրիկաներն ու ղավոդները և բոլոր հողը ընդհանուրի սեփականություն լինի, այսինքն՝ համայնական լինի. և ոչ թե առանձին մարդկանց սեփականություն»[2]։

Կոմունիստները ցանկանում են, որ ունևորները, որոնք աշխարհում փոքրամասնություն են կազմում, այլևս չիշխեն, չհարստահարեն գյուղի և քաղաքի աշխատավորներին, որոնք կազմում են աշխարհում բնակչության մեծամասնությունը։

«Կոմունիստներն ուզում են, որ իշխանությունը այդ մեծամասնության ձեռքն անցնի, այսինքն՝ բանվորների ու գյուղացիների ձեռքն

[1] Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 309։
[2] Նույն տեղում, էջ 301։

անցնի, որպեսզի նրանք այնպիսի կարգեր հաստատեն աշխարքում, երբ մարդը մարդու արյուն չթափի, երբ մարդը մարդու ճորտը չլինի, երբ ոչ թե մեկն աշխատի ու կիսաքաղց նստի, իսկ մյուսը պարապ-սարապ ման գա ու վայելի աշխարհի բոլոր բարիքները, այլ ընդհակառակը՝ երբ բոլորը կաշխատեն և բոլորն էլ կվայելեն իրենց աշխատանքի պտուղը. երբ չի լինի աղա ու ճորտ, երբ մարդիկ բոլորն ազատ ու հավասար կլինեն»[1]։

Տերյանը միանդամայն պարզ և հստակ բնութագրել է սոցիալիզմի հիմնական սկզբունքները և հայ բանվորներին ու գյուղացիներին պարզաբանել է Կոմունիստական պարտիայի խնդիրները բանվորների և գյուղացիների կողմից իշխանությունը նվաճելուց հետո։

Նա պահանջում է բարձրացնել աշխատավորների դասակարգային գիտակցությունը և զգոնությունը, կոչ է անում չխարվել «փողատերերի» և «հողատերերի» խորամանկություններից և «քաղցր խոսքերից», ավելի համախմբվել Կոմունիստական պարտիայի շուրջը, ավելի ամրապնդել աշխատավորների միասնությունը, գիտակցելով, որ մասսաների ուժը պարտիայի շուրջը համախմբվածության և միասնության մեջ է, որ «Մարդիկ մեկ-մեկ որ դուրս գան, ուժ չունեն, բայց ճշմարիտ է ասված, թե—գեղը կանգնի՝ գերան կկոտրի»[2]։

* * *

Տերյանը «Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին» բրոշյուրի երկրորդ բաժինը հատկացրել է 1917 թ. բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի ընթացքի և բնույթի վերլուծությանը, ժամանակավոր բուրժուական կառավարության իմպերիալիստական քաղաքականության մերկացմանը, ինչպես նաև ցույց է տվել էսերո-մենշևիկյան, մանրբուրժուական համաձայնողական պարտիաների դավաճանությունը բանվոր դասակարգի և ողջ աշխատավորության շահերին։

Հետևյալ դիպուկ խոսքերով է նա նկարագրել էսերների և մենշևիկների համաձայնողականությունն ու վերասերումը իմպերիալիստական բուրժուազիայի կամակատարների։

«Բայց այդ վեց նոր մինիստրներն այն տեսակի սոցիալիստներից էին, որոնք ուզում են գայլին ու գառին հաշտեցնել ու համաձայնեցնել, ուզում են աղային ու ճորտին միացնել։ Դա անհնար բան է, ընթերցող, և իսկական սոցիալիստը այդպիսի բան չի մտածի, որովհետև գիտի, որ ոչ գայլն ու գառը կհաշտվեն, ոչ ջուրն ու կրակը։ Իսկական սոցիալիստը գիտե, որ չի կարելի ջուր ու կրակ իրար խառնել — կամ կրակը կմարի, կամ ջուրը կչորանա. նրանք գիտեն, որ կամ գառը պիտի սաղ մնա, կամ գայլը քաղցած — ուրիշ կերպ չի լինի։ Իսկ նոր մինիստրները, որ իրանց սոցիալիստ էին անվանում, ուզում էին անհաշտելին հաշտեցնել, բայց վերջը հողատեր և փողատեր մինիստրների խելքին հարմարվեցին ու նրանց կամակատարը դարձան»[3]։

---

[1] Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 301։
[2] Նույն տեղում, էջ 303։
[3] Նույն տեղում, էջ 305—306։

Տերյանը ցույց է տալիս, որ ժամանակավոր կառավարությունն իր գոյության ամբողջ ընթացքում, սկսած Միլյուկովից մինչև Կերենսկին, Ծերեթելին և Զերնովը չլուծեցին և չէին ցանկանում լուծել հողի հարցը, որ ժամանակավոր կառավարությունը խուլ մնաց ժողովրդի կենսական այդ պահանջի առթիվ։ Նրանք խաբում էին ժողովրդին հողի հարցի լուծումը կապելով Սահմանադիր ժողովի հրավիրման հետ, իսկ Սահմանադիր ժողով հրավիրելու մասին շաղակրատելուց բացի, գործնական ոչ մի քայլ չէին անում այդ ուղղությամբ։

«... Կերենսկին և հողատեր ու փողատեր մինիստրները ժամանակավոր կառավարության մեջ են մտել և ուզում են ժողովրդի քթից բռնած ման ածել. դրա համար բոլշևիկներն սկսեցին պահանջել ժամանակավոր կառավարությունից, որ անմիջապես կարգադրություն անի և պամեշչիկների հողերը տա գյուղացիներին՝ առանց Հիմնադիր Ժողովին սպասելու։ Բայց հենց որ հողի մասին խոսք էր բացվում, ժամանակավոր կառավարությունը խոսքը կտուրն էր քցում կամ նորից իր երգը երգում — սպասեցեք, Հիմնադիր Ժողովը կդումարվի և այդ ժողովը կվճռի խնդիրը — ուրիշ խոսքով՝ «համբերիր ձի, գարուն կուգա յոնջա կբուսնի»։ Եվ այդպես խաբելով ժամանակավոր կառավարությունը չէր ուզում հողատերերի շահին դիպչել. նրանցից հողը խլել ու գյուղացիներին տալ և ոչ էլ Հիմնադիր Ժողով էր գումարում»[1]։

Տերյանը, ղեկավարվելով պարտիայի 1917 թ. ապրիլյան կոնֆերանսում ագրարային հարցի վերաբերյալ Լենինի ղեկուցման առթիվ ընդունված որոշմամբ, որը վերաբերում էր կալվածատիրական հողերը կոնֆիսկացիայի ենթարկելուն, մեջ է բերում Լենինի այն միտքը, որ ամբողջ հողը, առանց բացառության, ամբողջ ժողովրդի սեփականությունը պիտի դառնա։

Հայտնի է, որ ժամանակավոր կառավարությունը, ինչպես նաև էսերները և մենշևիկները ոռնոց բարձրացրին բոլշևիկյան պարտիայի այն կոչի դեմ, որ գյուղացիական կոմիտեները անհապաղ պետք է հողը բռնագրավեն կալվածատերերից։ Նրանք բոլշևիկների այդ կոչը անվանեցին ապօրինություն և անկարգություն։

Լենինը գյուղացիական դեպուտատների 1-ին Համառուսաստանյան համագումարում արտասանած ճառում, պատասխանելով կալվածատերերի կամակատարների բարբաջանքներին, ասում է.

«Մինչև օրս այնպես են կարծել, թե կարգն ու օրենքը՝ դա այն է, ինչ հարմար է կալվածատերերին ու չինովնիկներին, իսկ մենք պնդում ենք, թե կարգն ու օրենքը այն է, ինչ հարմար է գյուղացիության մեծամասնությանը»[2]։

Տերյանը, բերելով Լենինի մտքերը, ցույց է տալիս, որ իսկական կամայականությունն ու ստրկացումը եղել է և մնում է կալվածատիրական հողատիրության վրա հենվող կամայականությունը և ստրկացումը։ Նա հմտորեն օգտագործելով Լենինի բերած տվյալները, նշում է, որ Ռուսաստանում հողի մեծ մասը պատկանում էր կալվածատերերին։

---

[1] Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ [illegible]

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. [illegible]

Այսպիսով, Վ. Տերյանը անգլո-ամերիկյան իմպերիալիզմի գործակալ գաշնակցության արյունոտ դիկտատուրայի ճնշման տակ գտնվող հայ բանվորներին ու գյուղացիներին բացատրելով բոլշևիկների պարտիայի և նրա մեծ առաջնորդ Լենինի վերաբերմունքը հողի հարցում, ցույց տալով հայ աշխատավորության ավագ եղբայր՝ ռուս բանվորների և գյուղացիների հերոսական պայքարը հանուն Սովետական իշխանության, կոչ էր անում հայ բանվորներին ու գյուղացիներին՝ հետևել իրենց ավագ եղբոր ուսույցիոն օրինակին, մտնել բոլշևիկների պարտիայի մեջ ու նրա ղեկավարությամբ իրենց ձեռքը վերցնել իշխանությունը, հողը և դարձնել համաժողովրդական սեփականություն։

«Բանվորներն ու գյուղացիները պիտի միանան ամեն տեղ, մտնեն բոլշևիկների կոմունիստական կուսակցության մեջ, ընտրեն իրենց մարդկանց ու հողն էլ, իշխանությունն էլ իրենց ձեռքն առնեն»[1]։

* * *

«Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին» աշխատության երրորդ եզրափակիչ գլխում Տերյանը շարադրում է Լենինի հանճարեղ կանխատեսումը հողի հանրային օգտագործման մասին և հմտորեն բացատրում այդ բարդ հարցը, հարազատ մնալով Լենինի գաղափարներին։

Հողը կալվածատերերից վերցնելը և ազգայնացնելը արդյոք նշանակում է, թե հողը կանցնի աշխատավորներին։ Ոչ, չի նշանակում։ Դա միայն նշանակում է ազատ աշխատանք ազատ հողի վրա։

Տերյանը, օգտագործելով Լենինի բառերը, հողի օգտագործման այս սիստեմը համարում է «ազատ աշխատանք ազատ հողի վրա»։ Դա չի լինի հողի հանձնում աշխատավորներին։ Դա կնշանակի միայն այն, որ յուրաքանչյուր տնտեսատեր հողի ազատ տնօրինողը կլինի։ Հողի օգտագործման այս սիստեմը ցարական կալվածատիրական սիստեմից մի քայլ կլինի դեպի առաջ, բայց ոչ հիմնական լուծում։ Երկրորդ քայլը, որ առաջարկում էին բոլշևիկները, դա կալվածատիրական բռնագրավված յուրաքանչյուր խոշոր տնտեսությունից օրինակելի տնտեսություններ կազմակերպելն էր, օգտագործելով կալվածատիրոջ լծկանը և ինվենտարը, տնտեսությունը վարելով գյուղատնտեսների ղեկավարությամբ ու խորհուրդներով։ Տերյանը գրում է,— «Որպեսզի հողից կարողանան օգտվել ոչ միայն ունևոր գյուղացիք, այլև ամենաչունևորները, նույնիսկ վարձկան մշակները, նրանք պիտի միանան և պահանջեն, որ խոշոր տնտեսություններ կազմակերպվեն խոշոր հողատիրական կալվածքներում, որի վրա հսկողություն պիտի ունենան նույն տնտեսության մեջ աշխատող բանվոր-գյուղացիք, որի համար պիտի գործադրվեն հողատեր-աղայից խլած գործիքներն ու մեքենաները և տնտեսությունը պիտի կառավարվի գիտուն գյուղատնտեսի ցուցմունքներով»[2]։

Վ. Ի. Լենինն ասում է, որ հողն աշխատավորներին հանձնելու համար կա մեկ հիմնական ուղի, դա հողի կոլեկտիվ և համայնական օգտագործման ուղին է։

---

[1] Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 310։
[2] Նույն տեղում, էջ 312։

Լենինը նախազգուշացնում էր, որ հողի հանրային օգտագործման այդ երկու ձևերի կիրառումը կհանդիպի շատ դժվարությունների և խոչընդոտների, որովհետև առանձին տնտեսությունների գարավոր սովորությունը միանգամից չի չքանա, կպահանջվի երկար ժամանակ նոր կյանքին, նոր հիմունքներին համակերպվելու համար։ Առանց հողի ընդհանուր մշակման գյուղատնտեսական բանվորների կողմից, լավագույն մեքենաների գործադրմամբ, ուսյալ գյուղատնտեսների ղեկավարությամբ, կապիտալիզմի լծից ազատվելու ուրիշ ելք չկա, գրում է Տերյանը։

Նա ընդգծում է Լենինի այն հանճարեղ միտքը, որ եթե մենք հին ձևով շարունակենք նստել մանր տնտեսությունների վրա, թեկուզ և որպես ազատ քաղաքացիներ ազատ հողի վրա, միևնույն է, մեզ անխուսափելի կորուստ է սպառնում, որովհետև ամեն օր, ամեն ժամ քայքայումը մոտենում է։

Մեկնաբանելով Լենինի միտքը, նա ասում է. մենք գիտենք, որ Եվրոպայում շատ հեղափոխություններ են եղել, որոնք դեմոկրատական ռեսպուբլիկաներ են հաստատել, մենք գիտենք, որ Ամերիկայում 1865 թ. ճորտատերերը պարտվեցին և հարյուրավոր միլիոն գեսյատին հող անցավ ժողովրդի ձեռքը և, չնայած դրան, ոչ մի տեղ կապիտալիզմը այնքան ճնշող չէ, որքան Ամերիկայում։ Եվ այդ գիտակցությունը, Եվրոպայի ու Ռուսաստանի մեծ փորձը և մեր կոմունիստական ուսմունքը բերել են մեզ այն եզրակացության, որ առանց հողի կոլեկտիվ մշակման գիտուն գյուղատնտեսների ղեկավարությամբ, առանց նորագույն մեքենաների գործադրության, անհնար է ազատվել տիրող կապիտալիստական կարգերի ճնշող լծից։

«Իրերի ընթացքն այդ է պահանջում—պետք է համայնական տնտեսության ձևերի անցնել։ Ուրիշ ելք չկա։»[1],—եզրափակում է Տերյանը։

Նա ընդգծում է, որ միայն բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքի ամրապնդմամբ, և այդ դաշինքով ստեղծված բանվորների և գյուղացիների իշխանությունը, որը կհենվի ժողովրդական լայն մասսաների վստահության վրա, իսկական ժողովրդական իշխանություն կլինի և կկարողանա մտցնել պարտադիր աշխատանք ու կազմակերպել հանրային տնտեսություն։ Միայն այդպիսի իշխանությունը կարող կլինի վերջ տալ իմպերիալիստական պատերազմին և բուժել նրա հասցրած խորը վերքերը։

«Միայն այդպիսի իշխանությունը,—գրում է Տերյանը,—կարող է ազատություն տալ ազգերին և արդար կարգեր հաստատել Ռուսաստանում»[2]։

Վերը շարադրածից մենք տեսնում ենք, թե որպիսի կրքոտությամբ և անդրդվելի համոզմունքով է պաշտպանում Տերյանը Կոմունիստական պարտիայի ագրարային քաղաքականությունը, որը մշակել են պարտիան և նրա հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը։

Նա բախտ չունեցավ տեսնելու և մասնակցելու սովետական գյուղա-

---

[1] Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 310։
[2] Նույն տեղում, էջ 314։

ցիության հերոսական պայքարին և աշխատանքին, որ կատարվում էր պարտիայի ղեկավարությամբ՝ գյուղի սոցիալիստական վերակառուցման լենինյան պատգամների կենսագործման համար։ Գյուղի վերափոխման լենինյան պատգամները ոևոյյուցիոն ամենախոր հեղաշրջում էին, ինչպես միանգամայն գիտականորեն ըմբռնում և նախատեսում էր Տերյանը, գրելով. «Իսկ տնտեսական ձևերի վոփոխումն ավելի մեծ հեղափոխություն կլինի, քան թե այն հեղափոխությունը, որը Նիկոլային թախտից ցած գլորեց»[1]։

Գյուղի արմատական վերափոխման հնոոհիվ առաջացավ ամեն տեսակ շահագործումից աղատագրված գյուղացիություն, այնպիսի գյուղացիություն, որ դեռևս չէր տեսել մարդկության պատմությունը։ Իրագործվեց Տերյանի հավատը, համոզմունքը և բաղձանքը՝ տեսնել հայ գյուղացուն ժպիտով և ուրախ, առանց թախծի ու դառն աղքատության։

Ավարտելով աշխատությունը, Տերյանը կրկին վերադառնում է բրոշյուրի սկզբում գրածին և մատնացույց անում՝ «ահա, թե ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին»։

Դիմելով հայ բանվորներին ու գյուղացիներին, Տերյանը գրում է.

«Հիմա դուք գիտեք, թե ով է պաշտպանում բոլոր բանվորներին և չունևոր գյուղացիներին, հիմա դուք գիտեք, թե ում հետ պիտի գնաք, որ ազատություն ու հող ձեռք բերեք։ Հիմա դուք գիտեք, հայ գյուղացիներ, որ մեծամասնական (բոլշևիկ) կոմունիստների հետ միանալով՝ դուք միանում եք բոլոր երկրների պրոլետարների հետ, չունևորների, աշխատավորների հետ, իսկ երբ որ միանան բոլոր երկրների աշխատավոր չունևոր գյուղացիներն ու բանվորները, դուք գիտեք, թե որքան հզոր ու կարող կլինի այդ միությունը, որովհետև չէ՞ որ բոլոր մարդկության ճընշող մեծամասնությունը աշխատավոր չունևոր գյուղացիներն ու բանվորներն են կազմում։ Ահա թե ինչու պիտի միանաք ու ձեր ձայնը միացնեք համաշխարհային բանվորական ու աշխատավորական բազմության ձայնին— համաշխարհային ինտերնացիոնային»[2]։

Այսպես է ավարտում Տերյանը այդ գողտրիկ և հստակ գրքույկը, որը կոչվում է «Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին»։ Այդ փայլուն աշխատությունը ցույց է տալիս, որ Տերյանը եղել է համոզված լենինյան, ձևավորված և հասուն մարքսիստ, որ կարողացել է գիտական կոմունիզմի ամենաբարդ հարցերի մեջ խորանալ և դրանք բացատրել հայ աշխատավորությանը։

* * *

Տերյանի մյուս կարևոր աշխատությունը «Նամակ հայ գյուղացիներին և բանվորներին» կոչն է։

Ինչպես մատնանշեցինք, նրա գրչին պատկանող այդ երկը պատմական մի փաստաթուղթ է, դա Աղգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից Հայկական գործերի կոմիսարիատի կոչն է՝ ուղղված հայ բանվորներին և գյուղացիներին, որը գրել է Տերյանը, որպես Հայկա-

[1] Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 315։
[2] Նույն տեղում։

կան գործերի կոմիսարի տեղակալ։ Դուն առաջին մասում անողոք քննադատության է ենթարկվում և դիմակազերծ արվում բուրժուազիայի կեղծիքն ու սուտը՝ պրոլետարիատի և աշխատավորության ընդունակությունների ու արժանիքների մասին։

1917 թ. Փետրվարյան ռևոլյուցիայից հետո, հատկապես երկիշխանության շրջանում իմպերիալիստական բուրժուազիան և նրա «առաքյալները», բոլշևիկների և սովետների դեմ մղած իրենց կատաղի պայքարում առատորեն օգտագործում էին այն հին, վայրենի, ստոր, անհեթեթ նախապաշարմունքը, թե պրոլետարիատը և գյուղացիությունը անընդունակ են կառավարելու, որ իբր կառավարելու ընդունակությունները և շնորհքը տրված է միայն «բարձր դասակարգերին»՝ կապիտալիստներին, կալվածատերերին և նրանց ինտելիգենցիային։

Նիկոլայի արյունոտ գահը տապալելուց հետո, նշում է Տերյանը, ամբողջ բուրժուազիան միաձայն գոռում էր այն մասին, որ իշխանությունը հանձնվի բարձր դասին։

Երբ կազմվեց Ժամանակավոր կառավարությունը՝ «հողատեր ու փոզատեր մինիստրներից», այդ պարոնները չէին ցանկանում, որ հասարակ, աշխատավոր ժողովուրդը սովետների միջոցով ինքն իրեն կառավարի։

«Դրանց կարծիքով,—գրում է Տերյանը,— ժողովուրդն ունակ չէ ինքն իրան գլխի տերը լինելու, ինքն իրան կառավարելու։ Դրանց կարծիքով ժողովրդի գլխին իշխան ու տեր պիտի կանգնեն հողատեր ու փոզատեր աղաները, ապա ազնվականներն ու աղա առուտուրականները և այդ աղաներին ծառայող, նրանց սեղանից կերակրվող և դրա համար աղաների շահը պաշտպանող պարոնները՝ Միլյուկովը, Լվովը, Կերենսկին և դրանց նմանները»[1]։

Տերյանը նշում է, որ դարավոր ստրկության և խավարի մեջ ապրելով, ժողովուրդը լավ էր հասկացել, որ թագավորին և նրա մինիստրներին պետք է անհապաղ տապալել և տապալել էր, բայց նա դրանից հետո «դեռ չգիտեր աղա հողատերերի, փոզատերերի խորամանկությունները և հաճախ նրանց ասածը հալած յուղի տեղ էր ընդունում»։ Փետրվարյան բուրժուադեմոկրատական ռևոլյուցիայի շնորհիվ արթնացան և դեպի քաղաքականությունը շարժվեցին միլիոնավոր մարդիկ, որոնք քաղաքականության մեջ անփորձ էին և այդ պատճառով դյուրահավատ՝ ինչպես Ժամանակավոր կառավարության նկատմամբ, որը կազմվել էր ռևոլյուցիայից հետո, այնպես էլ մենշևիկների և էսերների նկատմամբ, որոնք ջրի երես բարձրացան մանր բուրժուական տարերքի ալիքի ուժով։

«Երբ համար, երբ Կերենսկին դուրս էր գալիս ու կուրծքը ծեծելով աղաղակում էր, թե ինքը ժողովրդի համար մեռած է, թե ինքը սոցիալիստ է, ժողովուրդը հավատում է և Կերենսկուն ժողովրդի բարեկամ համարում և դրա համար իշխանությունը արյունաքրու և բոնավոր թագավորի անկումից հետո մնում էր աղաների և նրանց ծառաների՝ Կերենսկու, Միլյուկովի, Զերնովի և նմանների ձեռքում»։

Դրանք բոլորը աշխատավոր ժողովրդի բարեկամ էին ձևանում,

---

[1] Վ. Տերյան. Երկեր, հատ. 4, էջ 320։

[2] Նույն տեղում, էջ 327։

որպեսզի ավելի հեշտ խարեն բանվորներին և գյուղացիներին։ Դրանք բոլորը ժողովրդի կեղծ բարեկամներն էին, նրա ոխերիմ թշնամիները, որոնց հաջողվում էր իրենց սոցիալիստ անվանող էսերների և մենշևիկների պարտիաների դավաճանության հետևանքով ժամանակավորապես մոլորության մեջ պահել ժողովրդի մի մասին։

Տերյանը հայ բանվորներին և գյուղացիներին ցույց է տալիս, որ ժողովրդի շահերի իսկական արտահայտիչը, պաշտպանը և այդ շահերի համար պայքարող միակ պարտիան բոլշևիկների պարտիան է «...բոլշևիկները, որոնք միշտ պատերազմի դեմ էին խոսում ու գրում, որոնք միշտ իշխանների, ազնվների դեմ էին կռվում, որոնց թագավորական լիտի իշխանությունը հազարներով կախաղան էր հանում ու սպանում, որոնց հազարներով բանտ էր գնում ու Սիբիր աքսորում։ Ահա այդ ժողովրդի իսկական բարեկամները, այդ ճշմարիտ և ոչ թե Զերնովի, Կերենսկու և դաշնակցականների նման կեղծ ու սուտ սոցիալիստները, սկսեցին բացատրել աշխատավոր ժողովրդին, որ իշխանությունը ժողովուրդն իր ձեռքը պիտի առնե և ոչ թե թողնե Կերենսկու, Պապաջանովի, Միլյուկովի և նմանների ձեռքում»[1]։

Բոլշևիկները սկսեցին բաց անել ժողովրդի աչքն ու միտքը, գրում է Տերյանը և ցույց տալ, որ հենց այդ պատճառով էլ ժամանակավոր կառավարությունը ամեն կերպ հալածում էր բոլշևիկներին, բոլշևիկների մասին տարածելով «հազար ու մի սուտ ու փուտ լուրեր»։

Նա ցույց է տալիս, թե ինչպես քայլ առ քայլ մերկացնելով ժամանակավոր կառավարության իմպերիալիստական բնույթն ու հակաժողովրդական քաղաքականությունը, բոլշևիկների պարտիան ժողովրդին ավելի սեղմ շարքերով էր համախմբում իր շուրջը և նախապատրաստում հեղափոխությունի մարտերին։

«Բոլշևիկների Կոմունիստական պարտիան (կուսակցությունը) քանի գնաց ուժեղացավ, որովհետև գյուղացիք ու բանվորները ճանաչեցին իրենց իսկական բարեկամներին և սկսեցին նրանց շարքերը մտնել։ Գյուղացիներն ու բանվորներն սկսեցին կազմակերպվել բոլշևիկների Կոմունիստական պարտիայի (կուսակցության) ղեկավարությամբ։ Քանի գնաց աճեց, զորացավ այդ կազմակերպությունը։ Եվ ահա հոկտեմբերին այդ կազմակերպությունն արդեն այնքան զորեղ էր, որ մի հարվածով գետին գլորեց իշխանության գահին բազմած ժողովրդի թշնամիներին՝ Կերենսկուն և իր ընկերներին»։

Ահա թե որքան պարզ ու հասկանալի ձևով է բացատրել Տերյանը մարդկության կյանքում ամենաարմատական հեղափոխության նախապատրաստումը և հաղթանակը, հեղափոխություն, որը սկիզբ դրեց մարդկության զարգացման նոր դարաշրջանի։ Խոսելով Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ ստեղծված Սովետական իշխանության բնույթի մասին, Տերյանը գրում է. «Պետերբուրգի և Մոսկվայի բանվորներն ու զինվորները խորտակեցին ժողովրդի թշնամիների իշխանությունն ու այդպիսով իշխանությունն անցավ ժողովրդի իսկական բարեկամների—ժողովրդի շահը պաշտպանողների ձեռքը, այսինքն իր՝ ժողովրդի միջից ընտրված բանվորների, չքավոր

[1] Վ. Տերյան. Երկեր, հատ. 4, էջ 327։

գյուղացիների ձեռքը, ահա թե ինչ է նշանակում Խորհուրդների իշխանությունը (այսինքն գյուղացիներից, բանվորներից և զինվորներից ընտրված Խորհուրդների իշխանությունը)[1]։

Տերյանը մեծ զայրույթով է արտահայտվում ժողովրդի այն երդվյալ թշնամիների նկատմամբ, որոնք ամենալկտի պրովոկացիաների և ստի միջոցով ցանկանում էին վարկաբեկել Սովետական իշխանությունը ժողովրդի աչքում և վերականգնել բուրժուազիայի ու կալվածատերերի իշխանությունը։

«Որպիսի լրբություն—նրանք ուզում էին խաբել գյուղացիներին ու բանվորներին և այդ խաբված գյուղացիների ու բանվորների ուժի վրա հենված խլել իշխանությունը բոլշևիկների գյուղացիական ու բանվորական կառավարության ձեռքից, իրանց ձեռքն առնել այդ իշխանությունն ու նորից քերթել ու ճնշել հասարակ, աշխատավոր ժողովրդին։

Ուրիշ խոսքով այդ դավաճաններն ուզում էին խարեբայությամբ ստիպել, որ գյուղացիք ու բանվորները իրանց ձեռքով իրանց տունը քանդենա[2]։

Տերյանը ցույց է տալիս, որ եթե առաջ ռուսական իմպերիալիստական բուրժուազիան, կոնտրռևոլյուցիոն ու համաձայնողական պարտիաները կանգնած լինելով պետական իշխանության դեկի մոտ, սանձում էին ծայրամասերի ազգային բուրժուազիայի անջատողական ձգտումներն ու փորձերը, ապա Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո, Սովետական իշխանության ուժերը ջլատելու և նրա դեմ պայքարը հեշտացնելու նպատակով ամեն կերպ աջակցում էին ծայրամասերի անջատմանը Սովետական Ռուսաստանից։

«Եվ ահա տեսեք որպիսի զարմանալի բան,—գրում է Տերյանը,—այդ Միլյուկովներն ու Կերենսկիները, Չխեիձեներն ու Ծերեթելիները, որոնք առաջ միշտ կրկնում, աղաղակում էին, թե Ռուսաստանը պետք է մեկ լինի և անբաժան, այն օրից, երբ իշխանությունը գյուղացիական ու բանվորական խորհուրդների ձեռքն անցավ, սկսեցին քարոզել, թե պետք է Ռուսաստանից բաժանվել, պետք է Ուկրաինան, Դոնը, Կուբանը, Կովկասը անկախ հայտարարել, իբր թե ազգերն ազատելու համար[3]։

Տերյանը ոգևորված նկարագրելով կոնտրռևոլյուցիայի ուժերի առաջին փորձերի ջախջախումը երիտասարդ Սովետական իշխանության կողմից, անցնում է անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն պարտիաների մերկացմանը, որոնք հանդիսանում էին ինչպես ռուսական բուրժուազիայի հենարանը Կովկասում, այնպես էլ անգլո-ամերիկյան ու գերմանա-թյուրքական իմպերիալիզմի գործակալները։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան Պետրոգրադից ու Մոսկվայից սկսեց արագորեն տարածվել ամբողջ երկրում։ Խորհուրդների իշխանությունը,—նշում է Տերյանը,—քանի գնում զորանում էր ու տարածվում ողջ Ռուսաստանում։

Սովետական իշխանության հաղթական երթը հասավ նաև Անդրկովկաս։

---

[1] Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 328։
[2] Նույն տեղում, էջ 329։
[3] Նույն տեղում։

«Կովկասում ևս սկսվեց քիչ-քիչ հաստատվել բանվորական ու զինվորական խորհուրդների իշխանությունը։ Բաքվում, ուր բանվորները շատ կազմակերպված ու աչքարաց էին, իսկույն իշխանությունն իրանց ձեռքն առան, ընտրեցին բանվորական և զինվորական խորհուրդ, որն սկսեց կառավարել քաղաքն ու մտցնել Պետերբուրգի խորհուրդների հրատարակած նոր օրենքները»։

Անդրկովկասում ռևոլյուցիոն շարժումների արագ տարածումը կատաղեցնում էր կոնտրռևոլյուցիոն պարտիաներին՝ մենշևիկներին, մուսավաթականներին, դաշնակներին, էսերներին։ Նրանք, օտարերկրյա իմպերիալիստների այդ լակեյները, ստեղծեցին հակասովետական բլոկ և կատաղի պայքար սկսեցին Սովետական Ռուսաստանի ու Անդրկովկասի ռևոլյուցիոն բանվորների և գյուղացիների դեմ։

Բնութագրելով Անդրկովկասի նացիոնալիստական պարտիաներից կազմված կառավարությունների կոնտրռևոլյուցիոն բնույթը, Տերյանը գրում է.

«Բայց Բաքվից այն կողմը դեպի Թիֆլիզ, Երևան, Գանձակ իշխանությունն իրանց ձեռքն էին առել թուրք բեգերի շահը պաշտպանող մուսավաթ կուսակցությունը, վրացի ազնվականների օգուտը պաշտպանող մենշևիկներն ու հայ սուտ սոցիալիստ հայ գյուղացու պաշտպան ձևացող կարճիկյանների կարճատես կուսակցությունը, այսինքն հայ հակահեղափոխական դաշնակցությունը»։

Տերյանը խոր ատելությամբ և զայրույթով մերկացրեց Անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոներների սուտն ու պրովոկացիան Սովետական իշխանության դեմ, պրովոկացիա, որի ծխափոշու մեջ ոճրագործների այդ շայկան ցանկանում էր թաքցնել իր սև գործը։

Տերյանը լավատեղյակ լինելով Անդրկովկասի դեպքերին, մերկացնում է Անդրկովկասի «կառավարիչների» ոճրագործությունների շարանը՝ հատկապես 1918 թ. Շամխորում Սովետական Ռուսաստան վերադարձող ռուս ռևոլյուցիոն զինվորների էշելոնների վրա բեգերի կատարած ավազակային հարձակումները և գազանային կոտորածը, որ կազմակերպվել էր Ժորդանիայի, Զխենկելու և Անդրկովկասի մյուս կոնտրռևոլյուցիոներների համաձայնությամբ, սակայն, որը նրանք խնամքով փորձում էին թաքցնել ժողովրդից։ Տերյանը այդ մասին գրում է.

«Ով չգիտե, որ ընդհակառակը իրանք այդ խաների ու բեգերի հետ բարեկամ դարձած, վրացի մենշևիկներն ու դաշնակցականներն էին, որ Կովկասում անկարգություն ու իրարանցում մտցրին, դրանք էին, որ զինեցին բեգերի գնդերը և այն ժամանակ, երբ իրանք Թիֆլիզում բեգերի հետ նստած խորհուրդ էին անում, թե ինչպես բոլշևիկներին ջնջեն, ահա հենց այդ ժամանակ Բաքվի ճանապարհի վրա նույն բեգերի ձեռքով ու իրանց օգնությամբ կազմված ու զինված խմբերը կոտորում էին անցնող ռուս զինվորներին, հայ ճանապարհորդներին և խաղաղ մալական գյուղացիներին»։

---

[1] Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 330։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 331։

Անդրկովկասի ժողովուրդների ցանկության և ձգտումներին հակառակ, Անդրկովկասյան սեյմը գերմանա-թյուրքական և անգլո-ամերիկյան ավազակ իմպերիալիստների կամքով 1918 թ. ապրիլի 22-ին իրավարանորեն ձևակերպեց Անդրկովկասի անջատումը Սովետական Ռուսաստանից։ Այդ չտեսնված դավաճանական ակտով Անդրկովկասը փաստորեն դրվում էր թյուրքական ենիչերիների արյունոտ սրի տակ։

Տերյանը խորը ատելությամբ և զայրույթով է արտահայտվում Անդրկովկասի աշխատավորների նկատմամբ կատարված այդ ծանր ոճրագործության մասին։

«Եվ մի տգեղ օր, մի զզվելի օր դավաճանները Կովկասը Ռուսաստանից անկախ հայտարարեցին, կտրեցին Ռուսաստանից»[1]։ Մերկացնելով թյուրքական ջարդարարների հայաջինջ, հայակեր քաղաքականությունը, Տերյանը մեծ ատելություն սրտում գրում է.

«... Տաճկաստանն էլ հենց այդ էր ուզում. Երբ նա տեսավ, որ պաշտոնապես Կովկասը կտրվեց Ռուսաստանից, իսկույն և եթ զորքը շարժեց առաջ և գրավեց Կովկասի հայաբնակ երկրները։ Տաճկաստանն այսպես ասաց՝ քանի որ դուք Ռուսաստանից անկախ պետություն եք, ուրեմն իմ Ռուսաստանի հետ կապած պայմանները (նկատի ունի Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, որը կնքվել է 1918 թ. մարտին—Ս. Ա.) ձեզ չեն վերաբերվում, ուրեմն ջուրն են ընկնում այդ պայմանները։

Իսկ այդ պայմանում ասված էր, որ Թյուրքիան Ղարսից դեպի անցնելու իրավունք չունի։ Այժմ, երբ Կովկասը անկախ է, ասաց Թյուրքիան, Ռուսաստանի հետ կապած պայմանն իր ուժը կորցնում է և դրա համար մենք պահանջում ենք, որ թույլ տաք մեր զորքը մտցնելու Երևան, Ալեքսանդրապոլ, Ախալքալակ և այլն։ Ահա թե ինչպես հայ աշխատավոր ժողովրդի տունը քանդեցին ժողովրդին բարեկամ ձևացող դաշնակցականները, միանալով թյուրք մուսավաթական բեգերի և դավաճան մենշևիկների հետ»։

Այսպես է մերկացնում Տերյանը Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոներներին և նրանց օտարերկրյա տերերին որպես Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասի ժողովուրդների երդվյալ թշնամիների։

Այստեղ մենք տեսնում ենք ոչ միայն բոցաշունչ պրոպագանդիստ, այլև քաղաքագետ Վահան Տերյանին, որը բոլշևիկյան պարտիայի դիրքերից դիպուկ կերպով մերկացնում և ճիշտ կերպով գնահատում է Կովկասյան կոնտրռևոլյուցիոներներին, ճիշտ է բնորոշում Անդրկովկասում տեղի ունեցող դեպքերն ու ստեղծված դրությունը և միաժամանակ հայ բանվորներին ցույց է տալիս այդ դրությունից դուրս գալու ճիշտ ուղին։

Տերյանը հարց է տալիս, բայց ինչ անել այժմ, եթե թյուրքական հորդաները խուժել են հայկական գավառները և մահացու վտանգի մեջ դրել հայ աշխատավոր գյուղացուն և բանվորին։

«Մենք, հայ բոլշևիկներս չենք կարող անտարբեր մնալ, երբ վտանգի է ենթարկված հայ աշխատավոր գյուղացու և բանվորի կյանքը, որովհետև

[1] Վ. Տերյան. Երկեր, հատ. 4, էջ 332։
[2] Նույն տեղում։

չէ՞ որ մեր Կոմունիստական պարտիան (կուսակցությունը) չունևոր գյուղացիների և բանվորների կուսակցությունն էր։

Տերյանը ընդգծում է, որ նախ և առաջ պետք է բանալ հայ ժողովրդի աչքը և ցույց տալ նրա իսկական թշնամուն, որը նրան քշել է այդ կոշմարի մեջ։

Այնուհետև ինչպես և առաջ, պիտի կրկնել ու պնդել, որ հայ աշխատավոր գյուղացու և բանվորի միակ բարեկամը Ռուսաստանի բանվորն ու գյուղացին է և այդ գյուղացիների ու բանվորների շահը պաշտպանող, նրանց ձեռքով հաստատված Սովետական իշխանությունն է։

Տերյանը բազմաթիվ անգամ կրկնում է այդ նույն միտքը, նա ասում է, որ պետք է նորից ու նորից կոչ անել հայ գյուղացիներին ու բանվորներին, որ միանան Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների բոլշևիկյան պարտիային, Ռուսաստանի բանվորական և գյուղացիական, Սովետական կառավարության ռևոլյուցիոն գնդերին։

Այդ է փրկության միակ ճիշտ ուղին։

Տերյանը համոզում էր Հայաստանի ողջ աշխատավորությանը, որ հայ ժողովրդի ազատագրումը, նրա բախտը սերտորեն կապված է Սովետական Ռուսաստանի հզորության հետ։

«Մենք միշտ քարոզել ենք, և այժմ էլ պիտի անդադար քարոզենք, որ հայ աշխատավոր ժողովրդի փրկությունը Ռուսաստանի Բանվորական և Գյուղացիական խորհուրդների իշխանության հզորության մեջ է»[2]։

Ովքեր դեմ էին Սովետական իշխանության, Տերյանը համարում էր դավաճաններ, ժողովրդի ամենաոխերիմ թշնամիներ։ Հայկական գործերի կոմիսարիատի այդ կոչում, Սովետական իշխանության և Կոմունիստական պարտիայի անունից հայ ժողովրդին դիմում և կոչ էր անում.

«Եվ ահա մենք հայ կոմունիստ բոլշևիկներս կոչ ենք անում ձեզ հայ գյուղացիներ և հայ բանվորներ՝ միացեք Ռուսաստանի խորհուրդների կարմիր գնդերին, ուժ տվեք նրանց, որովհետև բանվորական և գյուղացիական Ռուսաստանի սոցիալիստական կարմիր գնդերն են, որ պիտի մի գեղեցիկ օր եղբայրական ձեռք մեկնեն տանջված ու կեղեքված մահացու վտանգի մեջ գտնվող հայ գյուղացուն ու բանվորին, միայն Ռուսաստանի Բանվորական և Գյուղացիական խորհուրդների իշխանության կարմիր գնդերն են, որ կարող կլինեն ազատություն ավետել արյունաներկ երկրին»[3] (Ընդգծումը մերն է—Ս. Ա.)։

Այսպես էլ եղավ...

Ռուս բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն կարմիր գնդերը Ժողկոմսովետի նախագահ Վ. Ի. Լենինի և Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար Ի. Վ. Ստալինի ցուցումներով եղբայրական ձեռք մեկնեցին «տանջված ու կեղեքված», մահացու վտանգի մեջ գտնվող հայ ժողովրդին և ընդմիշտ ազատություն ավետեցին «արյունաներկ երկրին»։

Բայց անգութ մահը արդեն կտրել էր Տերյանի կյանքի թելը և նա բախտ չունեցավ տեսնելու այդ դեղեցիկ և բաղձալի օրը, որին նվիրաբե-

---

[1] Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 332։
[2] Նույն տեղում, էջ 333։
[3] Նույն տեղում։

բեց իր կարճ, բայց կրակոտ կյանքը։ «Տերյանն այսուհետև անբաժանելի է պրոլետարիատից և մասնավորապես հայ աշխատավորից։ Նրա համար նա աշխատեց երկար ժամանակ, Նրա համար նա կռվեց և կռվում ստացավ մահացու վերք։ Մինչև վերջին շունչը նա մնաց պրոլետարիատին հավատարիմ» (Ալ. Մյասնիկյան)[1]։

* * *

Վ. Տերյանի գրչին է պատկանում «Զեկուցագիր Թյուրքահայաստանի մասին» պատմական փաստաթուղթը, որի մեջ նա՝ մերկացնելով հայ ժողովրդի բոլոր թշնամիներին, ցույց է տալիս, որ հայ ժողովրդի ազատագրումը հնարավոր դարձավ միայն Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ, որ «միայն բանվորա-գյուղացիական ռևոլյուցիան և՛ բանվորների և՛ աղքատ գյուղացիների կառավարության ստեղծումը «կարող է ազատություն բերել հայ ժողովրդին և բուժել նրա վերքերը», մենք միշտ մատնացույց ենք արել այս բանը հայ գյուղացիների և բանվորների մասսաներին»,— գրում է Տերյանը։

Վերը հիշված աշխատությունները Հայկական գործերի կոմիսարիատի կողմից ուղարկվող գրականության միջոցով ոչ միայն տարածվում էին Սովետական Ռուսաստանի տերիտորիայում բնակվող հայ աշխատավորության մեջ, այլև հասնում էին Հայաստանի աշխատավորությանը, որը տընքում էր դաշնակցության դաժան լծի տակ։

Բայց Վ. Տերյանի գործունեությունը որպես Հոկտեմբերյան ռևոլյուցիայի պրոպագանդիստի, դրանով չի սահմանափակվում։

Տերյանը ռևոլյուցիայի հանճար Լենինի վեհ գաղափարները հայ ժողովրդի մեջ տարածելու նպատակով ձեռնարկեց Լենինի երկերի թարգմանությանը, սակայն հնարավորություն ունեցավ թարգմանելու միայն նրա «Պետություն և ռևոլյուցիա» ու «Կ. Մարքսի կենսագրությունը» աշխատությունները։

Տերյանը որպես Հայկական գործերի կոմիսարի տեղակալ, Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության գաղափարները հայ աշխատավորության մեջ լայն տարածելու նպատակով կազմակերպեց և ծավալեց այդ կոմիսարիատի հրատարակչական վիթխարի գործունեությունը, որն առանձին հոդվածի նյութ է։

---

[1] Լենին. Պետություն ու հեղափոխություն (թարգմ. Վ. Տերյան), Մոսկվա, 1921, էջ 146։